ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/1-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 12.04.2023թ.

**ՀՀ պաշտպանության նախարարությունը**, ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»**, մի կողմից, և **«Իվաֆարմ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Իվանյանի**, որը գործում է Իվաֆարմ ՍՊԸ-ի կանոնադրության, այսուհետ՝ **«Վաճառող»**, մյուս կողմից, հիմք ընդունելով **03.02.2023թ.** կնքված **№ԳՀԱՊՁԲ-23-9/1-6** գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին:

1. ***Համաձայնագրի առարկան***

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 Հավելվածների:

1.1.1 Պայմանագրի 6.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարելու դեպքում:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայնագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի № 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ***Համաձայնագրի գինը և վճարման կարգը***

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***7 665 600(յոթ միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով, բայց ոչ ուշ, քան մինչև 11.12.2023թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144129<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ<br><br>Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | «Իվաֆարմ» ՍՊԸ<br>Իրավ. Հասցե՝ ք.Սևան, Նաիրյան 168, բն23<br><br>Գործ. Հասցե՝ Գ. Շերամի 92/3<br>«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ<br>Հ/Հ 220250126848000<br><br>ՀՎՀՀ 08625799<br>տնօրեն<br><br>Ա. ԻՎԱՆՅԱՆ |

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/1-6 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV անվանումը | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | մատակարարման ժամկետը 2023թ. 2-րդ եռամսյակ |
| 25 | այլ դեղորայք | պիպերացիլին (պիպերացիլինի նատրիում), տազոբակտամ (տազոբակտամի նատրիում) piperacillin (piperacillin sodium), tazobactam (tazobactam sodium) | հատ | 300 | 6600 | 1,980,000 | 300 |
| 26 | այլ դեղորայք | պանտոպրազոլ (պանտոպրազոլի նատրիումական սեսկվիհիդրատ) pantoprazole (pantoprazole sodium sesquihydrate) | հատ | 2,500 | 1128 | 2,820,000 | 2,500 |
| 60 | բժշկական օգնության միջոցներ | լևոբուպիվակային (լևոբուպիվակայինի հիդրոքլորիդ): levobupivacaine (levobupivacaine hydrochloride) | հատ | 1,200 | 2388 | 2,865,600 | 1,200 |

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-23-9/1-6 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների՝ ընդ որում | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 25 | 33691176/529 | այլ դեղորայք | 1,980,000 | 1,980,000 | 1,980,000 |
| 26 | 33691176/530 | այլ դեղորայք | 2,820,000 | 2,820,000 | 2,820,000 |
| 60 | 33191580/503 | բժշկական օգնության միջոցներ | 2,865,600 | 2,865,600 | 2,865,600 |
| Ընդամենը՝ | | | | | 7,665,600 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի սեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Իվաֆարմ» ՍՊԸ Տնօրեն

Ա. ԻՎԱՆՅԱՆ